մէջ պահեցին և փախան ի Մուշ ի վանս սրբոյն Կարապետի, զի մի գուցէ այնտեղ մնալով մնտալուտ չարչարանաց չտոկալով մատնեն զայնս թշնամւոյն ձեռք։

Ուրեմն այստեղ մնացին միայն Սահակ եպիսկոպոս, Թալուեցի Յարութիւն եպիսկոպոս, Զուլջանցի ժամորհնող Յովսէփ վարդապետ և Գալուստ վարդապետ։

(Շարունակելի) Պ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

ԱԶԳԱՅԻՆ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հաշիւ ելից և մուտից եկեղեցական ծխական երկսեռ ուսումնարանին Հայոց Դարբանդու ի 1էն Յունվարի 1888 ամի ցl՝ն Յունվարի 1889 ամի։

Անցեալ 1888 ամի յունվարին, ուսումնարանիս գանձապահը ներկայացնելով հոգաբարձութեանը իւր պաշտօնավարութեան միամեայ հաշիւը, յայտնեց, որ այնուհետև ինքն անկարող է գանձապահի պաշտօն վարել, քանի որ ուսումնարանի գանձարանում ոչ միայն առ ձեռն դրամ չկայ, այլ և ուսումնարանի դրամագլխից եղած է 5 ռ. 63 կոպէկ և միևնոյն ժամանակ ուսումնարանի գանձարանը պարտ է իրեն 13 ռուբլի, իւր սեփական դրամից ծախսած լինելու պատճառաւ։

Արդարև ուսումնարանի դրութիւնը շատ անապահով էր և մինչև անգամ ապագան կասկածելի. ահա այս էր պատճառը որ յարգելի հոգաբարձութեան միւս անդամներն ևս մի այդպիսի տագնապելի ժամանակ մերժեցին գանձապահի պաշտօնը։ Ուսումնարանը պէտք էր պահպանել և հարկաւոր էր գործը կարգի ձգելու համար մենք թէև նախագահ հոգաբարձութեան, այնուամենայնիւ յանձն առանք տանել այդ պաշտօնը, ազատելու դպրոցը այն հեռանքից, որին ենթարկուելու էր նա իւր նիւթական այդ օրինակ դրութեան պատճառով։

Գանձապահի պաշտօն ստանձնելուց ցայսօր անցել է մի ամբողջ տարի և այժմ պարտք ենք համարում ներկայացնել մեր միամեայ ելևմտից հաշիւը, ո՛չ թէ այն պատճառաւ, որ իբր հաշիւ կարդացուի, այլ գաղափար տալու մեր դպրոցի ներկայ վիճակի վերայ։

Մուտք.

Նախկին գանձապահից ոչինչ չէ ստացուած բացի պարտքից։

Ուսումնարանիս աւագ ուսուցչի ձեռամբ առանձին մատեանով ստացուած է.

	Ռ.	Կ.
1) Աշակերտների և աշակերտուհիների թոշակագրամ . .	216	
2) Ծախսուած դասագրքերի հաշուից	24	40
3) Ձեռագործների վիճակախաղի արդիւնք. . . .	101	
4) Հասարակաց ժողովարանում կայացած դիմակահանդէսից յատկացրին ուսումնարանին	34	50
5) Ուսումնարանին նուիրած սպիրտի վաճառումից գոյացել էր և գործարանի գործակատարից ստացուեց . .	60	30
6) Սիրողների թատրոնական երկու ներկայացումից . .	180	92
7) Սուրբ Մեսրոպեան ընթերցարանին վառելափայտ և լուսաւորութիւն մատակարարելու համար . . .	20	
8) Հանգուցեալ երեցփոխի որդի Պ. Ի. Բաբայեանը եկեղեցու մուտքի կէսը յանձնեց, այն է	405	33
9) Կողմնակի - պատահական նուէր . . , .	3	70
10) Ուսումնարանի դրամագլխի տասնամեայ տոկոս . .	300	
11) Ուսումնարանի դրամագլուխ *)	1994	37
Գումարն է .	3440	52

Ելք.

Ցունվար, փետրվար և մարտ ամիսներին ուսումնարանի գանձարանում փող չլինելու պատճառով ուսուցիչների ռոճիկները բաժանուել են մեր սեփական միջոցներից։

1) Աւագ ուսուցիչ Պ. Ց. Մարաղեանին } Ուսուցչուհի Տիկին Մ. Մարաղեանին } մի տարուայ ռոճիկ.	600	
2) Ուս. Պ. Պ. Տարեկանեանին նոյնպէս . . .	320	
3) Աբրահամ Ֆ. Սպանդունեան և Օր. Մ. Մակարեան	Զրի	
4) Ուսումնարանի ծառային մի տարուան ռոճիկ , .	60	
5) Նախկին գանձապահին վճարուած է իւր մեզ վերայ մընացած պարքը	13	
6) Հոգաբարձութեան վճռի համաձայն Օր. Մ. Մակարեանին իւր ձրի պաշտօնավարութեան համար նուիրել է մի ոսկեայ ժամացոյց և վճարուել է - . . ,	40	

(*) Ուսումնարանի դրամագլուխը 2000 ռուբլի է. բայց նախկին գանձապահը գրամի պակասութեան պատճառով շարժել էր։ Այս տարի լրացրած է։

7) 20 սայլ վառելափայտի և փայտը կոտրատելու համար .	26	25
8) 9 փութ նաւթի և 12 պարկ ածուխի . . .	11	53
9) Շեռագործի համար գնուած նիւթերին . . .	17	84
10 ուսումնարանի համար գնուած կարեմեքենային . .	37	
11) Ապակիներ ձգողին դասարաններ լուացողին, թղթին, մատիտներին թանաքին և այլն մանր իրեղէններին .	18	
Գումարն է	1143	63

Ծախքը հանած մուտքից առ ձեռն դրամ. գրամագլխի հետ ի միասին կմնայ 2296 ռ. 88 կ.

Ուրեմն բացի դրամագլխից, որ տրուած է զանազան անձանց ի շահեցողութիւն, ուսումնարանի գանձարանում դրուած է առ ձեռն դրամ 296 ռ. 88 կ.

Այս 1889 ամի յունվարի 4-ին, յիշեալ հաշիւը ներկայացնելով հոգաբարձութեանը ի քննութիւն, հոգաբարձութիւնը գրաւոր ապացոյցների վերայ հիմնուելով, քննեց այն և ընդունելով հաշիւը վաւերացրեց.

Վերջացնելով հաշիւս յայտնումեմ խորին շնորհակալութիւնս ուսումնարանիս ուսուցիչներին, և մանաւանդ աւագ ուս. Ե. Մարաղեանին, որն ոչ միայն ամենայն եռանդով աշխատումէ ուսումնարանական մասի վերայ, որ գոհացրել և ուրախացրել է մեզ միշտ, այլ և այս մէկ տարուան ընթացքում օգնել է մեզ ուսումնարանի նիւթական անապահովութեան ժամանակ—գտնելով կողմնակի արդիւնքներ, սր. Սիրողների ներկայացումներ կազմել, վիճակախաղ սահմանել, թոշակները հաւաքել և այլն։

Նախագահ հոգաբարձութեան և գանձապահ՝

ԱԲՐԱՀԱՄ ՔԱՀ. ՍՊԱՆԴՈՒՆԵԱՆՑ.

5ն յունվարի 1889 ամի

Դարբանդ։

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի Ազգիս յանուն Աղէքսանդրապոլցի յարգելի Սարգսի Միրզայեանց յաղագս վարելոյ նորա զպաշտօն գանձապահ հոգաբարձուի Արդութեան օրիորդական ուսումնարանի Հայոց Աղէքսանդրապոլու զամս երեքտասան ամենայն արդիւնաւորութեամբ և հաւատարմութեամբ։

Կոնդակ օրհնութեան Վեհափառ Հայրապետի ազգիս յանուն Իշխան Գէորգէի Երիստով վասն նպաստելոյ նորա հայ ժողովրդ-